Հոկտ. 16–ին նրա ներկայացուցիչ գնդ. Ջէյմս Ռիչը Նախիջևանի զօրամասի հրամանատարին ու մահմետական ազգային խորհրդին ուղղեց մի նամակ, որով, ի միջի այլոց, ասում էր. «իբրև ներկայացուցիչ դաշնակիցների զերագոյն կոմիսարի, նրա բացակայութեան ժամանակ, պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ Նախիջևանի և Շարուրի շրջաններում խաղաղութիւն հաստատելու նպատակով Ադրբէջանի և Հայաստանի կառավարութիւնը համաձայնութեան են եկել, որ այդ երկու շրջանները յառաջիկայում էլ մնան դաշնակցական վարչութեան չերտում, ամերիկեան նահանգապետի վարչական իշխանութեան ներքոյ: Միացեալ Նահանգների բանակի երկրաչափ գնդ. Էդմոնդ Լ. Դէյլին նշանակուած է նահանգապետ: Նրա իր պարտականութիւններին անցնելը ենթադրւում է հոկտ. 23–ին Նախիջևանում: Միաժամանակ ենթադրւում է շրջանի կառավարութեան վերաբերեալ Ադրբէջանի և Հայաստանի՝ դաշնակիցների զերագոյն կոմիսարի հետ կապուած համաձայնութեան յայտարարումը: Մի խումբ մարդիկ, որոնց թւում էս և սպայակոյտի սպաները, գնդ. Դէյլին ու իր սպայակոյտը և Ադրբէջանի ու Հայաստանի ներկայացուցիչները, Նախիջևան կը ժամանեն հոկտ. 23–ին՝ յիշեալ արարողութեան մասնակցելու համար: Հրաւիրում ենք Նախիջևանի մահմետական ազգային խորհրդին, այլ և զինուորական ու քաղաքացիական ներկայացուցիչներին նոյնպէս ներկայ լինել»:

Ադրբէջանի և Հայաստանի կառավարութիւնները խոստացել էին նշանակել երեքական ներկայացուցիչներ՝ գնդ. Դէյլիի հետ Նախիջևան գնալու համար, բայց Ադրբէջանի կառավարութիւնը, վերջին րոպէին, մերժեց նշանակել: Գնդ. Դէյլին իր գործակիցներով Երևանից դուրս եկաւ հոկտ. 24–ին և Նախիջևանում ընդունուեց պատշաճ ձևով: Նրա նահանգապետութիւնը, սակայն, իրական փոփոխութիւն չմտցրեց դրութեան մէջ. Նախիջևանը փաստօրէն մնաց ինքնավար, մինչև 1920 թվի ամառայ դէպքերը:
